## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

16 սեպտեմբերի 2019թ. N 377-Ա

### ՊԱՏՇԳԱՄԲԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի և հիմք ընդունելով Պավել Բաբասյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Թույլատրել Պավել Բաբասյանին կատարելու իրեն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 17 շենք 12 բնակարանի (վկայական N 1640245, տրված 2003 թվականի հոկտեմբերի 29-ին) պատշգամբի ընթացիկ նորոգում թեթև կոնստրուկցիաներով՝ առանց նախագծային փաստաթղթերի:

2.Պավել Բաբասյանին՝ համայնքապետարանի 900105202510 հաշվեհամարին վճարել 3000 (երեք հազար) դրամ՝ ընթացիկ նորոգման թույլտվության ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 16
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2019թ. N 378-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԿԱՐԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 60-Ն որոշումը և Կարինե Հայրապետյանի հայտը՝ որոշում եմ.

1.Անհատ ձեռնարկատեր Կարինե Հայրապետյանին (հարկ վճարողի հաշվառման համար՝ 43112557) տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2019 թվականի հուլիսի 01-ից մինչև դեկտեմբերի 31-ի համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 16
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

17 սեպտեմբերի 2019թ. N 379-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 11 ՇԵՆՔԻ ԹԻՎ 31 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի և հիմք ընդունելով Ժակլին Ռուդոլֆի Աբրամովայի դիմումը՝ որոշում եմ.

1.Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի 11 շենքի թիվ 31 բնակարանի (վկայական 2500931, տրված 2008 թվականի հունիսի 06-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 11 շենք 31 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ     Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 17
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 սեպտեմբերի 2019թ. N 380-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 61-Ն որոշմամբ հաստատված հավելված N 2-ի և հիմք ընդունելով տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2019 թվականի սեպտեմբերի 17-ի N 11 արձանագրությունը՝ որոշում եմ.

1.2019 թվականի համար «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի նկատմամբ կիրառել 50%-ի չափով նվազեցման արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2.«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝

1) ապահովել կիրառված արտոնության կատարումը,

2) արտոնությունից օգտվողների կարգավիճակի փոփոխման դեպքում եռօրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել համայնքապետարան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ                    Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 18
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 սեպտեմբերի 2019թ. N 381-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 61-Ն որոշմամբ հաստատված հավելված N1-ի և հիմք ընդունելով տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2019 թվականի սեպտեմբերի 17-ի N 11 արձանագրությունը՝ որոշում եմ.

1.2019 թվականի համար Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի նկատմամբ կիրառել 50%-ի չափով նվազեցման արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2.Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝

1) ապահովել կիրառված արտոնության կատարումը,

2)արտոնությունից օգտվողների կարգավիճակի փոփոխման դեպքում եռօրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել համայնքապետարան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 18
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2019թ. N 382-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԸ, ԾԱԾԿԵՐԸ, ՋՐԱՎԱԶԱՆԸ, ԱՄԱՌԱՅԻՆ ԽՈՀԱՆՈՑԸ, ՊԱՐԻՍՊՆԵՐՆ ՈՒ ԲԱՑՎԱԾ ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1 կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված այգետնակը, ծածկերը, ջրավազանը, ամառային խոհանոցն ու պարիսպները կառուցված չեն և չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, ջրավազանն ու 2.2 քմ մակերեսով պարիսպը կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և հիմք ընդունելով 2821658 սեփականության վկայականը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, սեփականության իրավունքի վկայագիրը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն ու Ալվարդ Կարապետի Հայրապետյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Կոտայքի մարզի Նուռնուս գյուղի այգետարածքի 21-րդ զանգված թիվ 8 հասցեի անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դափանի թաղամաս 1 փողոց 8:

2.Ալվարդ Կարապետի Հայրապետյանին (ծնված՝ 1952 թվականի հոկտեմբերի 01-ին) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 1 փողոց 8 (ծածկագիր՝ 07-051-0136-0012) հասցեի 0.05 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության 114.1 քմ արտաքին (92.12 քմ ներքին) մակերեսով այգետնակը, ընդհանուր 71.3 քմ արտաքին (67.34 քմ ներքին) մակերեսով ծածկերն ու ամառային խոհանոցը, 15.0 քմ արտաքին (11.86 քմ ներքին) մակերեսով ջրավազանը, 2.4 քմ մակերեսով պարիսպները և ինքնակամ բացված 1 դուռը ճանաչել օրինական:

3.Ալվարդ Կարապետի Հայրապետյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 125510 (մեկ հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր տասը) դրամ՝ 114.1 քմ արտաքին մակերեսով այգետնակի օրինականացման վճար, 47190 (քառասունյոթ հազար մեկ հարյուր իննսուն) դրամ՝ ընդհանուր 71.5 քմ արտաքին մակերեսով ծածկերի, ամառային խոհանոցի ու պարսպի օրինականացման վճար և 1100 (մեկ հազար մեկ հարյուր) դրամ՝ բացված 1 դռան օրինականացման վճար: Ընդամենը՝ 173800 (մեկ հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր) դրամ:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 19
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2019թ. N 383-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 37 ՇԵՆՔԻ ԹԻՎ 17 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի և հիմք ընդունելով Անահիտ Սանասարի Խլոպուզյանի լիազորված անձ Նելի Նապոլեոնի Խլոպուզյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի 37 շենքի թիվ 17 բնակարանի (վկայական 2546830, տրված 2008 թվականի նոյեմբերի 17-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 37 շենք 17 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 20
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 սեպտեմբերի 2019թ. N 384-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, հիմք ընդունելով Անշարժ գույքի առքուվաճառքի պայմանագիրն ու Սուսաննա Ալբերտի Մկրտչյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղի Այգեգործական զանգված 2-րդ թաղամասի թիվ 23 անշարժ գույքի (վկայական թիվ 2358038, ծածկագիր 07-051-0124-0038) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Այգեգործական զանգված թաղամաս 2-րդ փողոց 23:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 20
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 սեպտեմբերի 2019թ. N 385-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԸ, ԶՈՒԳԱՐԱՆՆ ՈՒ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 8-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, հաշվի առնելով, որ այգետնակն ու պարիսպը կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, այգետնակը, պարիսպն ու զուգարանը կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հատկացված 0.05 հեկտար մակերեսով հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.0030 հեկտար մակերեսով հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2019 թվականի հուլիսի 17-ին տված N Ար-1443 արխիվային տեղեկանքը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունն ու Ռազմիկ Արսենի Սարգսյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Արովյանի շրջանի Նուռնուս այգետարածքի թիվ 17 տեղամասի թիվ 21 հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Տնաշինական թաղամաս 17-րդ փողոց 21:

2.Ճանաչել Ռազմիկ Արսենի Սարգսյանի (ծնված՝ 1939 թվականի ապրիլի 18-ին) սեփականության իրավունքը իրեն սեփականության իրավունքով պատկանող 0.05 հեկտար մակերեսով հողամասից (ծածկագիր՝ 07-051-0137-0015) փաստացի ավել օգտագործվող 0.0030 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ:

3.Ռազմիկ Արսենի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Տնաշինական թաղամաս 17-րդ փողոց 21 հասցեի 0.0530 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության 71.9 քմ արտաքին (61.47 քմ ներքին) մակերեսով այգետնակը, 1.33 քմ արտաքին (1.1 քմ ներքին) մակերեսով զուգարանը և 9.47 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

4.Ռազմիկ Արսենի Սարգսյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 877,8 (ութ հարյուր յոթանասունյոթ ամբողջ ութ տասնորդական) դրամ՝ 1.33 քմ արտաքին մակերեսով 2002 թվականին կառուցված զուգարանի օրինականացման վճար:

5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Սույն որոշման 2-րդ կետում նշված ընդհանուր 0.0530 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

7.Հաստատել՝ որոշման անբաժանելի մասը կազմող «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված ընդհանուր 0.0530 հեկտար մակերեսով վերոնշյալ հողամասի ու շինությունների հատակագիծը:

8. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 20
ք. Բյուրեղավան

**Հավելված**
*Բյուրեղավան համայնքի ղեկավարի*
*2019 թվականի սեպտեմբերի 18 -ի  N 381-Ա  որոշման*

ՑԱՆԿ
ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ «ԱՐԵՎ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՆՈՒՀ ՀՈԱԿ

| Հ/Հ | ԵՐԵԽԱՅԻ ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ | ԾՆՆԴՅԱՆ ՕՐ, ԱՄԻՍ, ՏԱՐԵԹԻՎ | ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍԸ |
|---|---|---|---|
| 1. | Սերժ Արմենի Բալայան | 25.06.2015թ. | 50%<br>2019թ.-ի սեպտեմբերի 01-ից սկսած |
| 2. | Թինա Դավիթի Եպիսկոպոսյան | 04.03.2016թ. | 50%<br>2019թ.-ի սեպտեմբերի 01-ից սկսած |
| 3. | Իշխան Արշակի Ազաբյան | 11.09.2015թ. | 50%<br>2019թ.-ի սեպտեմբերի 01-ից սկսած |
| 4. | Թինա Հովհաննեսի Առաքելյան | 11.09.2016թ. | 50%<br>2019թ.-ի սեպտեմբերի 01-ից սկսած |
| 5. | Մանան  Ռազմիկի Մնացականյան | 17.02.2016թ. | 50%<br>2019թ.-ի սեպտեմբերի 01-ից սկսած |
| 6. | Սարգիս Ռուստամի Կոնջորյան | 08.08.2016թ. | 50%<br>2019թ.-ի սեպտեմբերի 01-ից սկսած |
| 7. | Նարե Արմանի Մանուկյան | 16.03.2016թ. | 50%<br>2019թ.-ի սեպտեմբերի 01-ից սկսած |
| 8. | Ֆելիքս Արտյոմի Ազարյան | 30.05.2015թ. | 50%<br>2019թ.-ի սեպտեմբերի 01-ից սկսած |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

**Հավելված**
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2019 թվականի սեպտեմբերի 18 - ի N 380-Ա որոշման

ՑԱՆԿ
ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ

«ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ԱՈԻԿ ՀՈԱԿ

| Հ/Հ | ԵՐԵԽԱՅԻ ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ | ԾՆՆԴՅԱՆ ՕՐ, ԱՄԻՍ, ՏԱՐԵԹԻՎ | ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍԸ |
|---|---|---|---|
| 1. | Գևորգ Աշոտի Բաբայան | 06.05.2012թ. | 50%<br>2019թ.-ի սեպտեմբերի 01-ից սկսած |
| 2. | Ռեբեկա Ալեքսեյի Վենյամինովա | 20.09.2010թ. | 50%<br>2019թ.-ի սեպտեմբերի 01-ից սկսած |
| 3. | Ալիսա Արմանի Բավեյան | 08.12.2006թ. | 50%<br>2019թ.-ի սեպտեմբերի 01-ից սկսած |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ